



Հակոբ Պարոնյան

Խիկար

Օրագրութիւն Խիկարի - 2

ԵՐԳԵՑԷ՛Ք

Շատ երգեցէք : Բժշկական խմբի մը նորերս ըրած քննութիւնները ցուցին, որ երգելն առողջութեան շատ օգտակար է 222 երգչաց՝ 9-53 տարեկան, կուրծքը քննութեան ենթարկուեցաւ, եւ տեսնուեցաւ, որ երգչաց կուրծքն համեմատութեամբ չերգողներուն՝ շատ լայն կ'ըլլայ եւ երգչին հասակին հետ աճումը կը մեծնայ: Ասով երգչաց կուրծքն աւելի ամուր կ'ըլլայ եւ թոքն առողջագոյն, եւ ասոնք ալ երգչին հասակին հետ կ'աճին: Երգելն միմիակ առաջարգել դեղն է թոքախտի, միմիակ միջոց կրծոց աճման եւ գորանալուն. եւ այս կողմանէ մարմնամարզութենէ լաւագոյն է:

Հանդէս ամսօրեայ

Չար մարդիկ երգ չունին, ըսած է բանաստեղծը. երգեցող մարդիկ թոքախտ չունին, կ'ըսէ այսօր բժիշկը: Գիտութիւնն եւ բանաստեղծութիւնը կը միաբանին ուրեմն երգելու մէջ: Երիտասարդն իր սէրը երգելու ատեն թոքախտի ենթարկուելու երկիւղէն կ'ազատի, թոքախտի տրամադիր օրիորդն առաւօտուն պատուհանին առջեւ նստած՝ սիրականին անցնիլը տեսնելուն պէս Այս իրիկուն թատրոնը տեսնուինք կ'երգէ:

Կը փափաքէի Խիկարի յօդուածներն ալ մէյ-մէկ եղանակով հրատարակել, որպէսզի ընթերցողներս եւ ընթերցողուհիներս երգէին զանոնք փոխանակ ընթեռնելու եւ ամրացնէին իրենց կուրծքը:

Փափաքելի էր նաեւ, որ խօսիլը՝ որ շատ անգամ թոքին կը վնասէ, բոլորովին վերնար եւ մեր միտքը հասկցնելու համար երգելու սովորութիւնը հաստատուէր: Երգելը խօսելէն աւելի համակրութիւն կը վայելէ: «Հայհոյէ՛, բայց եղանակով հայհոյէ՛» կ'ըսէ առաժը: Ամէն յանցանք ներելի է քնարին: Օրինակի համար, ի՛նչ քաղցր է տեսնել հաւաքիչ մ'որ առաւօտուն վաճառատունդ կը ներկայանայ, մէկ ձեռքն սրտին վրայ դնելով եւ միւսը վեր բարձրացնելով կը սկսի ներդաշնակ եղանակով մ'երգել եւ ըսել.

Փոխանակագրին պայմանաժամը երէկ լրացաւ, եթէ այսօր չվճարէք, բողոք պիտի բառնամ:

Դուն ալ գրասեղանիդ առջեւ կը կանգնիս եւ թեւերդ տարածելով դէպի հաւաքիչը կը դառնաս, եւ քաղցր բայց ցած ձայնով կը սկսիս երգել.

Իրիկուան դէմ :

Հաւաքիչը կը բարկանայ եւ նախատական եղանակաւ մը.

Ես քու սպասաւորդ չեմ:

Այս եղանակին վրայ կը սրտմտիս եւ եղանակը փոխելով կ'երգես. Ա...վա... նա ա սկ, ամէն վանկին մէյ-մէկ աստիճան իջնալով, այսինքն ֆա մի ըէ է է է... (*diminuendo*):

Ա...վա...նա՛կ... (*mezzoforte*) եւ մէյ-մէկ աստիճան բարձրանալով, այսինքն լա... սի... տո...

(Ձայնագրութենէն շատ չեմ հասկնար, բայց կ'երեւակայեմ, թէ ձայնին աստիճանաբար բարձրացումն զարմացական նշանը պէտք է ըլլայ ձայնագրութեան):

Հաւաքիչը. Այս...սոլ...խօսքը սի տո ո՞րոտ քեզի լա, ըէ... չը վայլեց...տո ֆա մի...չը վայլեց...մի...ֆա...տո՛...չվայլեց... տո մի ֆա...չվայլեց...ֆա մի տո... չվայլենենենենե՛ց. եւ այլն, եւ այլն, եւ այլն. լա սի...տոտոտոտոտոտոտո՛... շարունակութիւնը յաջորդ թերթով:

(Ա՛հ, սիրելի Շիլլերս, իրաւ է որ շար մարդիկ երգ չունին, բայց բարի մարդիկ ալ բան մը չունին):

Վաճառականը. Շատ տո, էր, սի, կըն, լա, ցու, սոլ, ցիր, ֆա :

Հաւաքիչը. Ա, սի յո՛, տո :

Վաճառականը. Ժամէ մը եկուր, ֆա ֆա ֆա ֆա :

Հաւաքիչը. Շատ լաւ, լա լա :

Վաճառականը. Երթաք բարով (presto):

Հաւաքիչը. Խոնարհ յարգանքներս (tempo comodo). գոհ կը մեկնի հաւաքիչն եւ վաճառականն ալ վիրաւորուած չէ. մինչդեռ առանց եղանակի եթէ այդ ծանր բառը գործածուէր, իրարու գլուխ կը պատռէին: Այսպէս վաճառականն ու հաւաքիչը փոխանակագրի խնդիրը կը կարգադրեն եւ թոքախտին ալ ճամբան կը կտրեն:

Հարուստները միջին դասու վաճառականներէն որոշելու համար կրնան, եթէ ուզեն, դաշնակ մ'ունենալ իրենց վաճառատունն եւ դաշնակ զարնելով երգել: Դաշնակահարութիւն չգիտցողները կրնան դաշնակահար մը վարձել:

Միայն կը խորհին, թէ ամէն մարդ եթէ երգել սկսի՝ ի՞նչպէս պիտի կրնանք անցնիլ ոսկերիչներու շուկայէն, Ղալաթիայէն, կամուրջէն. ի՞նչպէս պիտի կրնանք լսելի ընել զմեզ:

Կը մտմտամ նաեւ, թէ այսչափ երգեցողներուն մէջ պարող չպիտի՞ գտնուի բնաւ: Պարն ալ չի՞ կրնար ստամոքսի տկարութիւնն արգիլել, եթէ ուժ տանք իրեն: Ինչ որ ըլլայ, երգելու կողմն են ես, որովհետեւ երգը շատ անպատեհութեանց առաջքն

առնելու յարմարութիւն ունի: Երգելով ամէն մարդ պիտի ստիպուի լուսոյ մէջ գործել, ամէն մարդ պիտի ստիպուի բարի ըլլալ եւ այս ամէն բարութեանց վրայ թոքախտի գլխուն ալ փորձանք պիտի ըլլայ:

Երգենք, երգե՛նք:

ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Օր չանցնիր յորում Հայ ժողովուրդն հրաւեր չընդունի այս կամ այն գրագետէն, երախտագիտութիւն յայտնելու այս կամ այն հեղինակին, այնպէս որ ամէն առաւօտ մեր ազգայիններն իրենք իրենց կ'ըսեն.

«Տեսնենք այսօր որո՞ւ պիտի յայտնենք երախտագիտութիւն»:

Ինչպէս յայտնի է Խիկարի ընթերցողաց, անցեալները պ. Հրագդան կը հրաւիրէր ազգն, առանց ժամանակ կորուսնելու երախտապարտ մնալ պ. Նորայր Բիւզանդացոյն, Ֆրանսերէն-Հայերէն բառարանի աշխատասիրողին: Երէկ Ա...ն հրաւեր կը կարդար ազգայնոց երախտագիտութիւն յայտնել պ. Տ...եանին, որ տոմարակալութիւն մը թարգմանած էր: Այսօր հանրածանօթ Հ. Ա...եանն է, որ կը խնդրէ ազգէն երախտագիտութիւն յայտնել Հ. Ս. Տ...եանին, որ Հնդերոպական լեզու անուն գիրք մը հրատարակած է: Վաղը կարգը Ք...ին է հրաւիրագիր մ'ուղղել ազգին եւ խնդրել իրմէ, որ քիչ մ'երախտագիտական զգացումներ յայտնէ Ս... հեղինակին, որ հայերէն աշխարհաբար քերականութիւն մը հրատարակած է կամ մանչ գաւակ մ'ունեցած է: Միւս օր Թ... մը պիտի երեւան գայ եւ պիտի խնդրէ ազգէն շնորհակալ լինել Բ...ին, որ աժան բանթալոն կը կարէ: Քանի մ'օր ետքը... մը պիտի պոռայ ազգին՝ «ինչո՞ւ կեցեր ես, աճապարէ՛, գնա՛, երախտագիտական զգացումներդ յայտնելու Մ...ին, որ համով բաշա կ'եփէ, մինչեւ իսկ Փ... մը պիտի համարձակի հրաւիրել զմեզ, որ փութանք ոտներն լգելու այն ազգասէր, վեհանձն հարուստներուն՝ որք ժողովրդէն ստակ կը մուրան Ն...եան վարժարան մը բանալու համար կամ ուրիշ վարժարան մը փակելու նպատակով: Եւ այս ընթացքով, քիչ ժամանակէն, ամէն հայ, ամէն ժամ երախտագիտական զգացումներ պիտի յայտնէ ուրիշին եւ երախտագիտական զգացումներ պիտի ընդունի ուրիշէն: Երախտագիտութեան

տուր եւ առ մը թոյլ եւ ժամանակ պիտի շտայ մեզ ուրիշ առեստուրով զբաղելու:
Ամէն անհատ, տարեգլխուն հասկնալու համար թէ ի՞նչ շահած է կամ կորուսած
է երախտագիտական առեստուրէն, թէ որքան վճարելի երախտագիտական
զգացումներ ունի կամ գանձելի երախտագիտութիւններ ունի, պիտի հարկադրուի
կանոնաւոր տետրակներ բռնել եւ օրուան գործողութիւնները ճշտութեամբ
նշանակել իւր Օր-Հաշիւին մէջ այսպէս.

« Թեթեւութիւն առ Սնապարծութիւն հարիւր կանգուն երախտագիտութիւն»
<!><!>.

« Անձնական շահ առ Շողորթրթութիւն քառասուն քիլոկրամ երախտագիտական
զգացում...»

Ընդհանուր ապրանք առ Անձնական շահ.

Խորամանկութիւն.

Վատութիւն.

Գողութիւն.

Շաղակրատութիւն եւ այլն:

Յիսուն եւ ութն պարկ երախտագիտական փափուկ զգացումներ, որ գնուեցան
մեծ. Անձնական շահ էֆենտիէն»:

Յետոյ Օր-Հաշիւին պարունակած բոլոր գործողութիւններն հետզհետէ
Մայր-Հաշիւին պիտի անցունէ ըստ օրինի, մասնաւոր հաշիւներ բանալով
Շողորթրթութեան, Թեթեւութեան, Գողութեան, եւ որ ի կարգին, տեսնելու համար
անշուշտ, թէ ի՞նչ շահած է թեթեւութենէ կամ ի՞նչ կորուսած է շաղակրատութենէ,
որպէսզի յաջորդ տարին բոլոր ուժը թեթեւութեան տայ, եթէ շահած է այս
ապրանքէն, եւ գործ չընէ շաղակրատութեան վրայ, եթէ վնասուած է անկէ:

Թողելով երախտագիտական վաճառականաց կարգադրել իրենց տետրակներն՝
կը փութանք, ըստ որում ուշացանք, խոնարհաբար ըսել այն անձանց, որ ամէն

առթիւ կը հրաւիրեն զազգն երախտագիտութիւն յայտնելու այս կամ այն անձի թէ՛

Ա. Ա. Անհատ մը արժանիքէն աւելի բարձրացնելու համար ազգ մը նուաստացնելու իրաւունք չունին:

Բ. Բ. Ազգի մը երախտագիտութեան արժանանալու համար Ֆրանսերէն-Հայերէն բարարանէ, Տոմարակալութենէ եւ Հնդերոպական լեզուէ ուրիշ գործեր կը պահանջուին:

Գ. Գ. Գրականութեան, գիտութեանց եւ արհեստից մէջ հետետողութիւնն ընդհանրապէս ստրկութիւն է եւ ստրուկ մը երբեք երախտագիտութիւն պիտի չընդունի ոչ իսկ անհատէ մը, թող թէ ամբողջ ազգէ մը:

Դ. Դ. Ազգի մ'երախտագիտութեան նշանն նոյն ազգին ամէնէն բարձր պատուանշանն է. եւ տոմարակալութեան թարգմանիչ մը այդ պատուանշանով զարդարելն նոյն ազգն աշխարհի առջեւ ծաղր ու ծանակ ընել է, անպատուել է, զայն լեռնաբնակ, վայրենի, տխմար հոշակելէն շատ աւելի ծանր է:

Ե. Ե. Բայց Ս. Մեսրոպայ տատերն չեն բաւեր, եթէ մի ըստ միոջէ թուենք այն անարգանքներն ու անպատեհութիւններն, որ խորհողի մտքին մէջ կը ծնին այսպիսի հրաւերներ ընդունած ժամանակն, ուստի կը հրաւիրենք ազգն բնաւ երախտագիտութիւն չյայտնել ոչ Պ. Ն...ի, ոչ Պ. Տ...եանի, ոչ ալ Հ. Ս. Տ...եանի, այլ քաջալերել այդ հեղինակները, զորս վիրաւորելու դիտաւորութեան ստուերն իսկ չունինք: Կը խնդրեմ, չնմանեցնենք մեր ազգն այն աղքատին, որուն քանի մ'ամիս առաջ հանդիպեցայ եւ որ բոլորովին մերկ եւ անօթի, երախտագիտութիւն կը յայտնէ իւր առջեւէն անցնող դագաղի մը, ըսելով. «Դու փրկիչս եղար»:

Խղճմտանքս թոյլ չտուաւ հարցնելու այդ աղքատին.

Ո՞ր են ընդունած երախտեացոյ նշաններն, պատասխան տուր, ո՛վ դու, որ փրկիչ մ'ունեցած ես եւ կորսուածի բոլոր հանգամանքներն ունիս:

ՕՐԱԿԱՐԳ

Կարելի չէ երեւակայել այն մեծ ուրախութիւնն, որով պիտի խնդան մեր ազգայիններն, երբ լսեն, թէ բազում ժամանակէ յետէ ազգասիրաց ոմանց մէջ յղացուած խորհուրդ մը սկսած է մարմնանալ. քանի՛ բերկրութեամբ պիտի լցուին արդեօք մեր ազգային սիրտերն, երբ զգան, թէ հայն գիտէ ոչ միայն երկնել, այլ եւ ծնանել: Եւ արդարեւ, ո՞ր հայն շիրճուիր, երբ իմանայ, թէ ազգային ընդարձակ յիմարանոցի մը հիմունքը դրուած են վերջապէս: Լուսաւորեալ դարուն մէջ, յորում կ'ապրինք, յիմարութեան պէտքը եւս քան զեւս զգալի կը լինէր եւ ամէն հայ կը փափաքէր, որ հայաբնակ գաւառացս ազգին արժանապատուութեան համապատասխանող հոյակապ յիմարանոց մը կանգնուէր, յիմարներու շէնք մ'որ ազգիս պատիւ, փառք ու պարծանք բերէր, խենթերու յարկ մ'որ կարենար մրցիլ օտար ազգաց յիմարաց շէնքերուն հետ, որպէսզի օտարը չյանդիմանէր զմեզ ըսելով.

Հայերը շատ ետ մնացած են յիմարութեան մէջ:

Անվիճելի ճշմարտութիւն մ'է այսօր, թէ ազգի մը մտաւորական կարողութիւնն անոր յիմարութեան աստիճանէն կը չափուի: Ազգի մը մէջ որքան շատ յիմարներ ըլլան, նոյնքան աւելի իմաստուններ կը գտնուին: Գթութեան եւ կարեկցութեան արժանի են այն ազգերն, որոնց յիմարներն մատի վրայ կը համրուին: Վայ անոնց: Բաղդատեցէ՛ք մեր ազգին քառասուն տարի առաջ ունեցած յիմարանոցին վիճակն ու մտաւորական կարողութիւնն անոր այս ատոր յիմարանոցին հետ, որոյ հիմունքը դրուած են ու մտաւորական կարողութեան հետ, որոյ հիմունքը դրուելու վրայ են: Ի՛նչ անհուն տարբերութիւն անոնց մէջ: Եւ միթէ հնա՞ր էր յառաջանալ իմաստութեան մէջ եւ ետ մնալ յիմարութեան մէջ: Ենթադրութիւնն իսկ յիմարութիւն է: Ընդհանրապէս հարուստ են այն ազգերն, որոնց մէջ շատ սնանկութիւններ կը պատահին: Արտաքոյ հարստութեան չիք սնանկութիւն: Աղքատի մը սնանկութիւնն տեսնուած չէ ցարդ:

Եւ ի՞նչ է յիմարութիւնն, եթէ ոչ սնանկութիւն մտաց: Սկիզբն յիմարութեան զենիթն է իմաստութեան: Մանաւանդ թէ յիմարութիւնն իմաստութեան քոնդուլն է. շնչէ՛ յիմարութիւնն եւ այն ատեն կը տեսնես թէ ի՛նչ յիմարութիւններ կը գործէ իմաստութիւնը: Բնական էր ուրեմն, որ նախկին յիմարանոցը չբաւէր մեր արդի մտային զարգացման եւ չկարենար տանիլ մեր ազգային յիմարներն, որ դուրսը

կը մնային անդարման եւ կը թափառէին խմբագրատանց մէջ, ժողովներու մէջ եւ լրագրաց մէջ:

Ազգը ցաւօք սրտի կը դիտէր խմբագրատանց, ժողովոց եւ լրագրաց մէջ-մէկ յիմարանոցի վերածումն եւ կը փափաքէր յարկի մը մէջ պատասպարել իւր յիմարները, որպէսզի մշակէր յիմարութիւնը: Իմաստո՛ւն յիմարութիւն: Եթէ սնանկութիւնը չքաջալերուէր՝ ոչ ոք պիտի յանդգնէր փափաքելու մեծ վաճառական լինիլ: Նոյնպէս պիտի վհատէին ազգային բանաստեղծները, պիտի յուսահատէին ազգային գրագէտներն եւ իրենց հանճարը խնայողութեամբ պիտի գործածէին՝ եթէ հոյակապ յիմարանոց մը չունենար ազգը: Յիմարութիւնն իմաստուններու իտեպն է: Մինչեւ իսկ կը յանդգնիմ կարծել, թէ մեր ներկայ մտային զարգացման դանդաղ ընթացքը կանոնատր յիմարանոցի մը չգոյութեան վերագրելի է. այո՛, յիմարութիւնն իմաստութեան անթառամ պսակն է, եւ ազգային պատմութիւնը ցոյց կու տայ, թէ քանի դասատուներ եւ գրագէտներ պատիւ ունեցած են յիմարանոցի մէջ աւանդել իրենց հոգին:

Կը հաւանիմ, թէ յիմարութիւնը քաջալերելով վարձատրած կը լինինք իմաստութիւնն... իւր յիմարութեան մէջ: Հնար չէ՞ միթէ իմաստուններու համար ալ յիմարանոց շինել եւ խրախուսել զանոնք, երբ դեռ կը վայելեն իրենց իմաստութիւնը: Դիզուիմ շատ աղէկ պատասխանած է այս հարցման, երբ քանի մը մարդիկ անոր մօտենալով հասկնալ ուզած են, թէ հարուստներն ինչո՞ւ աղքատներուն կ'օգնեն եւ իմաստասէրներուն չեն նպաստեր:

Որովհետեւ, պատասխաներ է սա գերազանց պատճառաւ չկար այն դարուն մէջ որովհետեւ, պատասխաներ է, ամէն մարդ կը վախնայ աղքատ ըլլալէ եւ ոչ ոք կ'երկնչի իմաստասէր ըլլալէ:

Բերանը պագնեմ Դիզուիմսին, որուն մէկ արձանը շինել տալու վրայ եմ գրասենեակիս մէջ դնելու համար, վասնզի ճշմարտութիւնը խօսած է, եւ այսօր իսկ մեր մեծատունք միշտ կ'աղաղակեն իրենց լռութեամբ.

Յիմար եղէք, օգնենք ձեզի:

Բայց ո՞վ է յիմարն եւ ո՞րն է իմաստունն: Ծանր խնդիր մ'ալ այս է: Շատերը յիմար եւ իմաստունը կ'ընդունին իբրեւ նոյնանիշ բառեր, որ իրենց մէջ ամենափոքր զանազանութիւն մ'իսկ չունին: Ես ալ, ի՞նչ մեղքս պահեմ, զգալի տարբերութիւն մը չեմ տեսներ իմաստուններու եւ յիմարներու մէջ: Եւ երբ այս մասին հարցում մ'ուղղեն ինձ, կանոնաւոր կերպով ետ քաշուելու համար կ'ըսեմ.

Որ իմաստնացուցանէ զանձն իւր, յիմարանայ եւ որ յիմարացուցանէ զանձն իւր, իմաստնանայ:

Շատերը առանց բան մը հասկնալու գոհ կ'ըլլան այս պատասխանէս եւ կը մեկնին: Իսկ ոմանք կը յանդգնին յայտնել թէ պատասխանէս բան մը չեն հասկցած, ինչ որ քաղաքավարութեան դէմ է քիչ մը: Ասոնց ալ կը պատասխանեմ.

Քուէ, քուէ եւ քուէ...

Վեզ, վեզ, վեզ, կ'ըսէ արժ. ստուգաբան հայրը, տարբերութիւն չտեսնելով այս երկու բառերուն մէջ:

ՔԻՉ Մ' ԱԼ ԱՌԱՆՑ ԴԵՂԻ

Քանի մը տարիներէ յետէ ամէն կողմ մեծ ջանքեր կ'ըլլան մեր ազգին գործերը շտկելու համար, եւ հակառակ այս ջանից ազգին գործերն աւելի ծուռ կ'երթան:

Մենք կը կարծենք, թէ ազգին գործերն աւելի կանոնաւոր ընթացք մը պիտի ունենային, եթէ այսքան ջանքեր եւ անձնանուիրութիւններ չըլլային:

Թող տանք ուրեմն քիչ մը սա ազգին եախան, տեսնենք ինչպէս պիտի երթայ:

Հիւանդներ կան, որ կը բժշկուին, երբ դեղ առնելէ դադրին:

Թող տանք, կ'ըսեմ, որ խելքը գլուխը ժողովէ խելճը, հերիք այսչափ դեղ տուինք:

Որո՞ւ պիտի հասկցնես, մեր մէջ անանկ ազգասէրներ կան, որ ուխտ եւ երդում ըրած են ազգին գործերուն ուղղութիւն մը տալու:

Օ՛ ազգասէրք, նախ ձեր գործոց ուղղութիւն տուէք եւ ապա ազգային գործոց:

Ասոր ի պատասխան կ'ըսեն.

Մենք գործ չունինք, որ ուղղութիւն տանք...

ԿԱՆՈՆԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՀԱՅՈՑ Ի ԲԵՐԱ ՇԻՇԼԻ

Ազգային լրագրոց մէջ կարդացինք վերջապէս Բերա. ազգ. գերեզմանատան կանոնագիրն, գոր յիշած էինք Խիկարի ներկայ թուոյն նախորդ երեսներէն միոյն մէջ:

Սոյն կանոնագիրն, որ տասնեւչորս յօդուածներէ բաղկացած է, երկու մասերու բաժնուած է: Ա. մասն գերեզմանատան յատկացուած է եւ երկրորդն՝ կարգադիր յանձնախումբին:

Յօդուած 3-ին տրամադրութեանը համեմատ իւրաքանչիւր հայ իրաւունք ունի եղեր թաղուիլ Շիլիի ազգային գերեզմանատան մէջ, սա պայմանաւ, որ մեռնելէն ետքը պիտի կրնայ թաղուիլ եւ այն ալ սահմանեալ դրամական փոխարինութիւն մը հատուցանելով առ սնտուկն գերեզմանատան եւ փոխարէն ընկալագիր մը ստանալով անշուշտ:

Յօդուած 6-ը ամէն ի ննջեցելոց համար արձանագրութեան եւ գերեզմանափորի ծախսոց փոխարինութիւն մը սահմանած է ըստ հետեւեալ ցուցակի.

Մատռան ուղոյ մասնաւոր գերեզմանատեղեաց

համար

Օսմ. լիրա 1 ½

Առաջին կարգի

» 1

Երկրորդ կարգի

» 1/2

Երրորդ կարգի

» 1/4

Ընդամենը

» 1/4

Այս գիներն թեև չափաւոր կը թուին մեզ եւ չենք կարծեր, որ մեր ազգային ննջեցեալներն դժկամին այս ճամբու ծախքը վճարել, սակայն կը ներուի մեզ անշուշտ հարցնել, թէ շատ մեռնիլ ուզողներու համար կամ հարիւր ննջեցեալի համար զեղշ մը չպիտի՞ ըլլայ:

Յօդուած 7-ը կը թոյլատրէ հարուստներուն մասնաւոր գերեզմանատեղեաց մէջէն իրենց համար որոշել յատուկ թաղ, միշտ դրամական փոխարինութիւն մը հատուցանելով ըստ հետեւեալ ցուցակի.

Մատոան ուղոյ մէն մի քառակուսի մեթրոյի

համար

Օսմ. լիրա 3

Առաջին կարգի

» 2

Երկրորդ կարգի

» 1

Երրորդ կարգի

Մէկ քառակուսի մեթրոյի համար բարձր են այս գները. ոչ ոք, մանաւանդ ներկայ դրամական տագնապին մէջ, կրնայ այդ գներով կալուած գնել: Չմոռնանք ըսել, թէ ննջեցեալի մը շատ նպաստաւոր չէ քառակուսի մեթրոյի չափը. կէս մեթրոյ փոսի մը մէջ ալ կրնայ հանգիստ պատկիլ ննջեցեալ մը, որ յաւիտենական քնոյն մէջ այս կողմ կամ այն կողմ դառնալու պէտք չունի, այլ է եթէ յանձնախումբն ամբողջ գերեզմանատունը վաճառելու եռանդով ողջ ազգայիններն ալ թաղելու միտք ունի:

Յօդուած 4-ին շնորհիւ եկեղեցականք իրաւունք ունին ետ մահուան թաղուիլ՝ առանց տուրք վճարելու, բայց անոնց պարագաներն եւ ազգականներն պարտաւոր են սահմանուած փոխարինութիւնն հատուցանել:

Միւս յօդուածներուն մէջ գծուած է յանձնախումբին պաշտօնն, որ է հանգանակութիւն, կտակ, նուէր եւ ամէն տեսակ հասոյթներն օրինական տրամադրութեանց համաձայն գանձել եւ գերեզմանատան վերաբերեալ շինութեանց ծախքերն հոգալ. իր հաշուին տարուէ տարի ներկայել առ թաղ. խորհուրդն, գերեզմանատունն պայծառացնել ու շէն պահել, ննջեցեալներն պատուասիրել, գերեզմանատան մէջ ներքին ուղիները շինել, ջրանցքներ բանալ, երկաթուղիներ շինել, գործարաններ հաստատել եւ այլն, եւ այլն, եւ այլն:

Մենք կը փափաքէինք, որ սոյն յանձնախումբին անդամները մեռեալներէ ընտրուէին եւ անոնց յանձնուէր կարգադրել իրենց վիճակակիցներուն գործն: Մենք կը փափաքէինք, որ ազգայինք բոլոր ուժն սպառէին նախ բարեկարգելու համար այն հաստատութիւններն, որոնցմէ պիտի բխի մեզ կեանք եւ լոյս, եւ քիչ կարեւորութիւն տային կարգ ու կանոն դնելու դիակներու պանդոկին մէջ, յորում, գոնէ թոյլ տրուելու է ամէն անհատի հանգստանալ ինչպէս որ կը փափաքի եւ որում, գոնէ մուտքն ազատ լինելու է հաւասարապէս ամէնուն, եւ որում դոնէն, գոնէ շտնէին կարծեցեալ ազնուականութիւնն եւ հարստութիւնն, որ այսքան չարիք կը հասցունեն ազգին գլխուն:

Անոնց, որ կը կարծեն թէ մեր դիակներն քաղաքակիրթ ազգաց դիակներուն պէս թաղելով մեր դրացի ազգաց համակրութիւնն կը հրապուրենք, անոնց՝ որոնց

ջիղերուն շղիպշիը եկեղեցիի մէջ տեղ գնել, գերեզմանատան մէջ գետին ծախու առնել, արքայութեան մէջ կալուած գնել, անոնց՝ որ չեն ուզեր իրենց ազնուաշուք դիակաց անշուք դիակի մը քով դրուիլն, անոնց՝ կ'ըսեմ, շատ հաճոյ պիտի թուի յանձնախումբին այս կանոնագիրն, որ, եթէ գործադրուի՝ քիչ ատենէն Բերայի թաղին մէջ խնդրոյ մը ծնունդ պիտի տայ, նոր վէճերու դուռ պիտի բանայ. եւ ատելի գէշն, ուրիշ թաղեր ալ Բերայի օրինակին հետեւելով, գերեզմանական բարեկարգութեան պիտի տան իրենք զիրենք, աժան թաղելու մասին իրարու հետ պիտի մրցին, իրարմէ յաճախորդներ պիտի յափշտակեն, եւ ո՛վ գիտէ, գուցէ հասոյթ շատցնելու համար մարդ ալ պիտի թունաւորեն. եւ մինչեւ որ ասոր ալ մոտան անցնի, բաւական ժամանակ պիտի կորսնցունենք:

Այս տողերէն պէտք չէ սակայն հետեւցնել թէ Խիկար կը հակառակի մեռելային բարեկարգութեան: Միայն թէ կը փափաքի ազգին ատելի օգուտ եւ պատիւ բերող հաստատութեանց բարեկարգութեանը համապատասխանող վիճակի մը վերածուած տեսնել ազգային գերեզմանատուններն. մէկ խօսքով, չուզեր գերեզմանատուններն թաղային վարժարաններէն, տնտեսական խորհրդէն, վանորէից հոգաբարձութենէն, երեսփոխանական ժողովէն, հիւանդանոցէն եւ այլն ատելի բարեկարգ վիճակի մը մէջ տեսնել: Եւ եթէ յանձնախումբն յաջողի գործադրել իւր կանոնագիրն, Բերայի գերեզմանատունն քիչ ատենէն պիտի նսենացնէ ազգային միւս բոլոր հաստատութիւններն: Յանձնախումբն ազգային վարչութենէն շատ ատելի ծանր պաշտօն մը պիտի վարէ, ուղիներ շինելու համար պիտի ունենայ իւր երկրաշափներն, հաշիւներն կանոնաւոր բռնելու համար պիտի ունենայ իւր համարակալն եւ անոր օգնականն, ընկալագրեր գրելու եւ տուրք գանձելու համար պէտք պիտի ունենայ գանձապետի մը, վերջապէս պիտի ունենայ իւր գործաւորներն, գործաւորաց պետն, մեռելաթաղերն եւ այլն, եւ այլն, եւ այլն. եւ այս ամէնը ունենալէ ետքը յանձնախումբին մէն մի անդամն գոնէ շաբաթը մի անգամ, առաւօտէ մինչեւ երեկոյ գերեզմանատունը մնալու պիտի ստիպուի, որովհետեւ պաշտօնեաներն իրենց քեյֆին ձգելն գործին կանոնաւոր ընթացքին կը վնասէ: Աղքատ ննջեցեալներն կրնան անիրաւութեանց գոհուիլ, անգութ պաշտօնեայ մը կրնայ գլխիվայր տնկել տնանկ աղքատ մը եւ անոր գրաւելիք գետինն հարուստի մը ծախելով ստակն առնել եւ սնտուկին մտից կողմը չնշանակել: Ուրիշ շատ անիրաւութիւններ կրնան պատահիլ, քանի որ դրամ կայ խնդրոյն մէջ: Օրինակի համար, երբ քառակուսի մեթրոյի բաւական

գետին վաճառուի՝ քանականաբար մնացած գետնին գինն կը բարձրանայ, եւ այն ատեն քիչ ստակ տուող կամ բնաւ չտուող ննջեցելոց համար ուրիշ գերեզմանատուն մը գտնել պէտք պիտի ըլլայ, եւ գուցէ գայ օր մ'ալ, ուր աղքատներն թաղուելու տեղ չկրնան գտնել: Որ կողմ ալ դառնանք յանձնախումբին երեւակայած գերեզմանատունն մեզի ոչ շահաբեր է եւ ոչ պատուաբեր: Մեր կարծիքն այս է, թէ ննջեցելոց ի նպաստ ըլլալիք ջանքերն յօգուտ կենդանեաց ի գործ դնենք, որովհետեւ գերեզմանատուններէն միայն պարծանք ակնկալելն մեռնելու որոշում տուած ազգաց վայել է:

ԲԱՐԵՒ ՈՒ ՄՆԱՔ ԲԱՐԵԱՒ

Վերջապէս ես ալ սորվեցայ գաղտնիքն, որով քանաստեղծք ոմանք, երբ նեղը մնան, կը յաջողին իրենց նկարագրութեանց մէջ մուծանել քաղցրութիւն, սաստկութիւն, վսեմութիւն եւ ինչ որ պէտք է ընթերցողին հիացում, գորով, սէր, յափշտակութիւն եւ այլն ազդելու համար:

Կու գամ այսօր ընթերցողացս ալ հաղորդել սոյն գաղտնիքն:

Արդ, այս գաղտնիքն կը կայանայ, ազնիւ ընթերցո՞ղ, երբեմն-երբեմն մէյ-մէկ քիչ բարեւ կամ մնայք բարեւաւ ըսել լեռներուն, ձորերուն, աստղերուն եւ այլն: Այս գաղտնեաց շնորհիւն է, որ վարպետ քերթողք կ'արթնցնեն իրենց ընթերցողներն, երբ ասոնք կը թմրին քնաբեր նկարագրութեան մը մէջ:

Ընդհանրապէս ամէնքս ալ կը սթափինք, երբ յանկարծ լսենք քերթող մ'որ մեծ ձայնով կը գոչէ.

«Բարե՛ւ ձեզ, լեռներ, բարե՛ւ ձեզ, սարեր, բարե՛ւ ձեզ, ձորեր, բարե՛ւ ձեզ, հովիտներ, բարե՛ւ ձեզ, աղբիւրներ, բարե՛ւ ձեզ, վտակներ, բարե՛ւ ձեզ, լիճեր, բարե՛ւ ձեզ, ծովեր, բարե՛ւ քեզ, լուսին, բարե՛ւ քեզ, երկինք, բարե՛ւ ձեզ, աստղեր, բարե՛ւ ձեզ, գիսաւորներ» եւ այլն:

Բնական էր, այս տողերուն մեզ ազդած տպաւորութիւնն չպիտի կրէինք, երբ տեսնէինք քերթող մ'որ լեռներուն դառնալով բարի լոյս կ'ըսէ, կամ աստղերուն թեմեննահ մը կ'ընէ, կամ գլխարկը կը հանէ լուսնին գայն բարեւելու համար: Ա՛հ,

քերթողներն շատ լաւ գիտեն իրենց ընթերցողաց քիթէն բռնելու արհեստը:

Անոնք հոգւոյ թելերն ցնցելու համար կրկնութենէ բնաւ չեն խորշիր, եւ մեզի պէս, օրինակի համար, երբ ընկերութեան մը մէջ մտնեն՝ ներկայից ամենուն մէկէն բարեւ ըսելով չեն երթար աթոռի մը վրայ նստելու, այլ ներկայից իրաքանչիւրն զատ-զատ կը բարեւեն այսպէս.

«Բարե՛ւ, օրհորդ Ա... , բարե՛ւ, տիկին Բ... , բարե՛ւ, ամուրի Գ... , բարե՛ւ, որբեւայրի Դ... , բարե՛ւ, խարտիշագեղ օհորոդ, բարե՛ւ, բարձրահասակ տիկին, բարե՛ւ, փոքրոտն պարոն եւ այլն եւ այլն եւ այլն»:

Մինչդեռ մենք եթէ լեռներով բերդացեալ ու գետերով բաժանեալ դաշտի մը մէջ իսկ գտնուէինք, պարզապէս պիտի ըսէինք.

«Լեռներ, սարեր, ձորեր, հովիտներ, աղբիւրներ, վտակներ, լիճեր, բարե՛ւ ձեզ»:

Քերթողք մնայք բարեաւի հետ ալ այնպէս կը վարուին՝ որպէս բարեւի հետ: Հրաժեշտի ողջոյն կու տան զատ-զատ այն ամէն բաներու, որոնց բարեւներ տուած են: Եւ որովհետեւ ճամբորդութեան մէջ քերթողի մ'առջեւ ամէն օր նոր տեսարաններ կը բացուին, տարակոյս չկայ թէ ընթերցողին առջեւ ալ ամէն վայրկեան նոր բարեւներ ու նոր մնայք բարեւներ երեւան կու գան: Քերթողներն լեռներն եւ այլն բարեւելով չեն շատանար, այլ նոցա հետ կը խօսին ազգային խնդրոց վրայ: Կը զարմանամ թէ բանաստեղծն լեռ մը բարեւելէն յետոյ, ինչո՞ւ չըսեր անոր.

«Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք»:

Կամ լուսնին.

«Այսօր քիչ մը տկար կը տեսնեմ գրեզ»:

Կամ արեւուն մնաք բարեաւ ըսած ժամանակն ինչո՞ւ անոր ձեռքը չթօթուեր:

Եւ սակայն յուսալի է, որ քիչ ատենէն այս արարողութիւններն ալ կատարուին:

Այս բարեւներն ու մնայք բարեւներն շատ ախորժելի թուեցան ինձ, եւ որոշեցի որ այսուհետեւ Խիկար ին ամէն յօդուածին մէջ սանկ քանի մը հաստ գտնուին անոնցմէ: Մեր որոշումն յարգենք ներկայ յօդուածիս մէջ ալ. բարե՛ւ, Բերայի հրկիզելոց խնդիր, բարե՛ւ, կաթողիկոսական ընտրութիւն, բարե՛ւ, Մնակեան խնդիր, բարե՛ւ, յառաջադիմական բեմական միութիւն:

Մնա՛յք բարեւ, անիրաւութի՛ւն, մնա՛յք բարեւ, քսութի՛ւն, մնա՛յք բարեւ, պաշտօնական գողութի՛ւն, մնա՛յք բարեւ, հարստահարութի՛ւն, մնա՛յք բարեւ, տարեգին չվաճառող բաժանորդագրութի՛ւն...

ՆԵՏ

Խ. Ն. Դերձակեան ստորագրութեամբ նամակ մը ստացանք Իգմիրէն... դժբախտաբար: Արգոյ նամակագիրն գմեզ լիրք, համարձակ, ապերախտ, խարդախ, վատ անուանելէն ետքը՝ կը յաւելու, թէ ինձի պէս մարդու հետ գործ ընել չուզեր: Նամակն կարդալէն յետոյ քիչ մը մտմտալով սա համոզումը գոյացուցինք, թէ մեծապատիւ նամակագիրն գմեզ ուրիշ մէկու մը նմանցուցած է անպատճառ:

Ալֆոնս Քարի ողջմտութեանը վրայ ոչ ոք կը կասկածի: Այս Ալֆոնս Քարը լաւ չէն յիշեր, բայց կը կարծեմ, թէ նմանօրինակ լեզուով իրեն նամակ գրողի մը ըսած է ատենօք. «Հաճեցէք, պարոն, ուղարկել ինձ ձեր ականջներուն հասցէն»:

Խիկար ` որ արտօնութիւն չունի անանկ խօսքեր ընելու` խոնարհաբար կը խնդրէ Իգմիրի բարեխնամ եւ պերճախօս առաջնորդէն, որ քիչ մ'աւելի ուժ տայ իր քարոզներուն:

Աղաչելով մեծ. Խ. Ն. Դերձակեան Էֆենտին, որ շնորհ ընէ ընդունիլ մեր ամենախոնարհ յարգանաց հաւաստիքն, կը խնդրենք, որ ուշադրութիւն ընէ քիչ մը հետեւեալ տողերուն:

Խիկարի ամբողջ թերթերն հրատարակուած են եւ գործակալաց դրկուած են:

Մեր Իզմիրի նախորդ գործակալէն շունեցանք ցարդ նամակ մոր յայտնէ, թէ Խիկարին այսինչ թիւն ստացած չէ:

Խիկար 100 մեճիտիէի փոխարէն 10 ոսկի միայն ընդունած է շնորհիւ իր գործակալին ազգասիրութեան, ինչպէս ըսած ենք արդէն:

Արդ, անոնք, որ կ'ուզեն ստանալ Խիկարի նախորդ շրջանի թիւերն՝ դիմելու են մեր Իզմիրի նախորդ գործակալին: Իսկ անոնք, որ չեն ուզեր՝ իրենց ընդունած թիւերն ետ դարձնելու իրատունքն լիովի կը վայելեն:

Ջօրատր ապացոյցներ կան, որ կը հաստատեն, թէ Խիկարի ամբողջ թիւերն հասած են Իզմիր:

Ա'րդ, իրողութիւնն այսպէս լինելով, կը խնդրեմ, որ երկու բարեկամաց կարդաք ձեր ինձ գրած նամակն եւ անոնց կարծիքն ինձ հաղորդել հաճիք:

Գալով այդ կէտին, թէ այսուհետեւ չէք ուզեր Խիկար ստանալ, համամիտ չեմ ձեզի: Պէտք է որ կարդաք դուք Խիկար, եւ ես պիտի դրկեմ ձեզի, ամէն միջոց ի գործ պիտի դնեմ, որ կարդաք զայն, մինչեւ իսկ բռնի պիտի կարդալ տամ, առանց ստակ մ'ուզելու սակայն: Դուք, երբա՛յր, կարօտ էք Խիկարին, որ ձեր քաղաքավարական եղանակն կրնայ բարեփոխել, եւ, հետեւապէս, օր մը փրկել զձեզ թուրք մը կամ ծեծէ մը, որովհետեւ քիչ մը դժուար է ամէն տեղ Պարոնեաններու պէս մարդոց հանդիպել:

Այս առթիւ կ'աղաչենք մեր Իզմիրի մեծ. գործակալն, որ հաճի հինգ օրինակ Խիկար դրկել ձրիաբար առ մեծ. Խ. Չ. Դերձակեան Էֆենտի: Միայն թէ ամէն անգամ ստացագիր մ'առնուի իրմէ սապէս. «Ստացայ հինգ օրինակ Խիկար (այնինչ) ամսոյ»:

Միտք ունինք Դերձակեան Էֆենտիի նամակն ամբողջ հրատարակել, եթէ յաջողինք Միարիֆ եւ ն արտօնութիւն առնուլ:

Վիեննայի Մխիթարեան վանքէն հրատարակուեցաւ թերթ մ' Ամսօրեայ Հանդէս անուն, որուն առաջին թիւն ստացանք եւ կարդացինք, թէ հաւն ինչպէս կ'ելնէ հակիրթն:

Մխիթարութեան արժանի թերթ մ'է սա. եւ տարակոյս չկայ, թէ աւելի շատ համբաւ կը գտնէր, եթէ Վարնայի գիտերէն մէկուն մէջ լոյս տեսնէր:

Կը վախնանք, որ Վիեննայի Մխիթարեան վանուց համբաւն պիտի նսեմացնէ այս հանդէսն, եթէ սա չարատաւորէ յիշեալ վանուց հոշակն:

Եւ մենք խեղճ արարածքս կը կարծենք, թէ վերջացաւ բարեկենդանը:

Տասնեւիններորդ լուսաւորեալ դարուս մէջ դիմակի գործածութիւնն սովորութիւն մը, պէտք մը դարձած է: Մարդիկ սորված են ա՛լ իրենց դէմքը դիմակ անցունել, ինչպէս վարժուած են իրենց ոտքը գուլպայ եւ իրենց ձեռքը ձեռնոց անցունելու: Ընկերութեանց մէջ, խորհրդարանաց մէջ առանց դիմակի մտնելն, բոկոտն եւ բոբիկ ձեռքով մտնելու չափ ծաղրելի է: Ուստի անոնք, որ անդիմակ են՝ ըմբռնած չեն տակաւին դարուս քաղաքակրթութեան ոգին, անկիրթ են, յանձնապաստան են, տիրացու են, դասատու են, տնտես են, ժամկոչ են, մեռելաթաղ են, ննջեցեալ են, եւ իբր այն՝ արժանի դիմակաւորաց կարեկցութեան:

Աստուած իմ, ե՞րբ պատիւ պիտի ունենանք տեսնելու մարդ մըստ պատկերի ձերում: Չմեռած գոնէ անգամ մը բնական դէմք մը տեսնելու բարեբախտութիւնը պիտի չունենա՞նք: Դիմակներու բախումէն դէմք մը չպիտի՞ ծագի բնաւ:

Տասնեւեօթը տարիներէ յետէ կ'աղաչեն բազմանուն կղերականի մ'որ հաճի վայրկեան մը վար առնել իւր դիմակն եւ ցոյց տալ ինձ իւր դէմքը: Բոլոր աղաչանքս ու պաղատանքս սպարդիւն կը մնան, կը մերժէ խնդիրքս եւ,

Չըլլար, ամօթ է, պատասխանը կու տայ ինձ միշտ:

Ո՛հ... անչնայն ամօթ է այսօր:

Վա՛յ անոնց, որ սորված են անչնալու:

Երանի՛ր քեզ ո՛ր Բ... պիտի ապրիս դու:

Խիկար շատուց կորուսած է բնական դէմքեր տեսնելու յոյսը, որովհետեւ համոզուած է, թէ որքան յարգուի դիմակներու ազատութիւնն՝ այնքան ատելի պիտի ծածկուի ճշմարտութիւնը: Խիկարին այս համոզումն՝ օր ըստ օրէ ատելի կը հաստատեն այն խնդիրներն, որք իրարու կը յաջորդեն ազգային շրջանակին մէջ:

Ազգային լրագրաց մէջ...

Չմոռնանք ըսել, թէ ազգային լրագիրներն ալ դիմակաւոր են:

Ազգային լրագրաց մէջ խնդիր մը կը հրատարակուի:

Այժմեան խնդիրներն, ինչպէս յայտնի է, դիմակաւոր կը մտնեն ու կը պարեն լրագրաց մէջ:

Ընթերցողն կ'աշխատի, որ այդ խնդրոյն խորը քննէ, ուսումնասիրէ եւ յետոյ իրեն համար համոզում մը գոյացնէ: Հազիւ թէ համոզում մը գոյացնել կը կարծէ եւ ատելի լրագիրն ու խնդիրն կը փոխեն իրենց դիմակը: Ընթերցողը կը սկսի խնդիրն անոր ստացած նոր դիմակէն քննել, եւ խնդրոյն վրայ գաղափար մը կազմելու պահուն, ուրիշ լրագրի մը մէջ խնդիրն բոլորովին տարբեր կաշիով դիմակաւորեալ կը տեսնէ: Կը կործանին, հիմն ի վեր կը տապալին իւր ենթադրութիւններն, դատողութիւններն եւ հետեւութիւնները: Հետաքրքիր է, սակայն կ'ուզէ հասկնալ: Ծանօթներէն տեղեկութիւն առնելու կ'որոշէ: Օրը տասը բարեկամէ տեղեկութիւն կը հարցնէ. անոնք ալ կու տան: Այս տասը տեղեկութիւններն ալ իրարու հակառակ են, այնպէս որ մէկ օրուան մէջ տասն անգամ տարբեր պատասխաններ տալու կը ստիպուի բարեկամաց.

Անանկ է նէ՛ կը դպչի, ինձի ուրիշ կերպով հասկցուցին:

Անանկ է նէ՛ չդպչիր, ինձի տարբեր կերպով պատմեցին:

Գործն ասանկ է նէ՛ ասոնք իրաւունք ունին:

Գործն ասանկ է նէ՝ ատոնք իրաւունք ունին:

Գործն անանկ է նէ՝ անոնք իրաւունք ունին:

Այո՛, այո՛, ասանկ ըլլայ նէ՝ տալու է:

Ատ ուրիշ խնդիր, անանկ է նէ՝ հարկաւ տալու չէ:

Եթէ ըսածդ ստոյգ է՝ ես ըլլամ նէ՝ կու տամ:

Տակէն այն խնդիրը կը ծագի կոր նէ՝ չեմ տար:

Վրայէն ադ խնդիրը կու գայ կոր նէ՝ կու տամ:

Այսչափ դիմակներու մէջ կարելի՞ է միթէ դիմակաւոր համոզում չունենալ:

Հատ մ՛ալ:

Այս անգամ ալ Ադեքսանդրիայէն ստացանք նամակ մը լի հայիոյութեամբք եւ սպառնալեօք:

Այս անգամ նամակին ստորագրութիւնն է Գ. Արշաւիր:

Գ. Արշաւիր քաջ համարակալ մէ, ըստ իւր վկայութեան:

Իւր տոմարագիտական պատուոյն խնայելու համար միայն չհրատարակեցինք Խիկարի վերջին թերթին մէջ իւր նամակն, որ գմեզ գովելով կը սկսէր եւ կը վերջանար ընդունելով Տիգլէնճեան ի համարակալութեան առթիւ մեր քննադատութիւնն, միայն երկու դիտողութիւններ ընելով, դիտողութիւններ՝ որոց հրատարակութիւնն իւր հաշուագիտական տաղանդին Գ. Արշաւիր հաշուագիտական տաղանդ ունի, միշտ ըստ իւր վկայութեան վնասակար դատուելով չհրատարակուեցան Խիկարի մէջ:

Գ. Արշալիրի յիշեալ դիտողութիւններն, որ մեծ արժէք ունին՝ դարձեալ ըստ իր վկայութեան, չհրատարակուեցան, որովհետեւ անոնք, ինչպէս հասկցուցած ենք մեր վերջին թերթին մէջ, դպրոցական գրասեղանի վրայ միայն կրնան ներկայացուիլ տկար աշակերտաց կողմէ:

Կարծիքներն ազատ են, հետեւաբար Գ. Արշալիր ազատ է հայհոյել, ինչպէս նաեւ ուրիշ թերթի մը մէջ հրատարակել իր դիտողութիւններն ու քննադատութիւններն, բայց իրատունք չունի ստիպել Խիկարն, որ իմաստակաց հետ վիճաբանութեան մտնէ:

Գ. Արշալի՛ր, գիտցէք, թէ Խիկար ալ կրնայ բարկանալ, եւ թէ՛ խնդիրն երբ հայհոյութեան վրայ է՝ առաջ Աստուած կրնայ զքեզ հայհոյութեանց մէջ խղդել իբրեւ ազգային թերթ, այնքան հոշակ ու համբաւ ունի ազգային մամուլն պերճախօսութեան այս գլուխին մէջ:

Գործդ գնա՛, ուրեմն:

Այս անգամ աղով ազատեցար, ուրիշ անգամ զգուշացիր սպունգէ:

Պ. Հրագդան կը փափաքի, որ իր վրայ խօսին, միշտ խօսին, աղէկ կամ գէշ, խօսին վերջապէս:

Պ. Հրագդան այս անգամ ալ գմեզ խօսել տալու փափաք կը յայտնէ, իր սրտաճնիկ Օրուան կեանքով ուզելով ճնլել նաեւ մեր... ոտքը, մոռնալով սակայն, թէ հեծնելու արհեստը շատ յառաջ գնացած է այսօր եւ չէ ինչ, որ էր Բաադամու օրով: Բնական է ուրեմն, որ թոյլ չտանք իրեն շիտակ ճամբան թողուլ ու պատերուն քսուիլ: Բնական է նաեւ, որ իրմէ վնասուելու բնաւ երկիւղ չունենանք, ո՛րքան ալ երերածուփ տատանի նա, որովհետեւ զՊարոնեան բարձեալ տանի :

Պ. Հրագդան ազատ է երիտասարդ խմբագրի մը մահէն եւ եպիսկոպոսի մը գերեզմանէն ծաղու նիւթ քաղել, ինչպէս նաեւ ազատ է մէկու մը մահուան վրայ կատակերգութիւն մ'արտասանել իբրեւ դամբանական. այս իր գրական ճաշակն

Է, որուն ըսելիք չունինք: Բայց երբ դեպքերը կը խեղաթիւրէ, կամ սուտն իբրեւ ճշմարիտ կլլեցնել կ'ուզէ՝ կ'ապացուցանէ, թէ կը վախնայ կամ ճշմարտութենէ կամ հրեշտակէ: Եւ այս մասին ըսելիք ունինք:

«Օտղկագարդի իրիկուն մը, կ'ըսէ Հրագդան, քարոզիչ եպիսկոպոս մը ժողովրդեան կ'ըսէր. «Աւանակներ էք, էշեր էք... Բայց իմ էշերս չէք, Բայց իմ աւանակներս չէք, հապա Քրիստոսին էշերն էք, Քրիստոսին աւանակներն էք»:

Որքան տող այնքան սխալ:

Ահաւասիկ բուն եղելութիւնը:

Մեծ. Արփիար Էֆենտի Արփիարեան Վարդավառի շաբթուն մէջ օր մը յիշեալ լուսահոգի եպիսկոպոսին տունը կ'երթայ մէկ բարեկամովն: Խօսակցութեան միջոցին Արփիար Էֆենտին լուսահոգիին արժանապատուութիւնը կը վիրաւորէ: Լուսահոգին՝ որ ազատամիտ մէկն էր՝ այն ատեն կը պոռայ Արփիար Էֆենտիին. «Դուք աւանակներ էք, էշեր էք... Բայց իմ էշերս չէք, իմ աւանակներս չէք, հապա... եան Էֆենտիի էշերն էք...»: Լուսահոգին ճշմարտախօսութեան համար հոգի կու տար:

Մասնաւոր տեսակցութիւն մ'իբր եկեղեցոյ բեմին վրայ կատարուած իրողութիւն մը նկարագրել եւ Քրիստոսի էշն... եան Էֆենտիի իշուն հետ շփոթել պարզապէս աչք գոցել է կամ ճշմարտութեան առջեւ կամ գայլի մ'առջեւ:

Պ. Հրագդան կը շարունակէ.

«Եպիսկոպոսի ձայնը զարհուրելի տեսակէն որոտընդոստ էր եւ նոյն շաբթուն Պարոնեան Թատրոնին մէջ կը գրէր, թէ Օրթագիղի քարոզիչին ձայնը կը լսուէր մինչեւ նաւամատոյցէն, որ եկեղեցիէն բաւական հեռու է: Եւ եպիսկոպոսն յաջորդ կիրակին կը պատասխանէր միշտ սեղանին վրայէն եւ ի՞նչ ընեմ, որ այդ դագեթաճիին ականջներն այնքան երկարն են, որ այնքան հեռու տեղէն ձայնս կը լսէ»:

Դարձեալ սխալ: Լուսահոգին պատասխանեց ոչ թէ բեմին վրայէն՝ այլ իւր տանը մէջ, ոչ թէ ժողովրդեան՝ այլ Թատրոնի խմբագրին: Ահաւասիկ իւր

պատասխանը.

«Ձեզի խաբար բերողին ականջները քիչ մը երկար ըլլալու են»:

Այն թուականին մեծ. Արփիար Էֆենտի Արփիարեան Էր մեզի ասանկ լուրեր տուողը: Քանի մ'օր ետքը տեսանք Արփիարեան Էֆենտին յիշեալ նաւամատոյցին վրայ եւ ցաւ յայտնեցինք իրեն, ըսելով՝ թէ սուտ տեղեկութիւններ կը հաղորդէր մեզ: Արփիարեան Էֆենտի պատուոյն վրայ երդում ըրաւ, թէ նաւամատոյցէն ականջովն լսած էր լուսահոգիին ձայնը: Եւ մենք ալ հաւատացինք, ո՛չ թէ վստահելով միայն իւր ականջներուն երկայնութեան, այլ նաեւ փորձառութեամբ համոզուած լինելով արդէն, թէ օր մը օրանց սուտ լուր մը հաղորդած չէր մեզ:

Նոյն համոզումն եւ կարծիքն ունինք նաեւ այսօր մեծ. Արփիարեան Էֆենտիի վրայ եւ լիայոյս ենք. թէ պիտի փութայ գայթակղեալ միտքերն բուժել, ուղղելով սխալն Հրագդանի՝ Միղասայ թոռան, որուն մնամ յարգանօք խոնարհ համետագործ:

Աւետիս Սուրենեան, վկայեալ փաստաբան Գաղղիոյ իրաւագիտութեան համալսարանի, Պահճէ քաբու, Շէյխ-Իսլամ խան, երկրորդ յարկ, թիւ 6 ստորագրութեամբ քննադատական նամակ մը հրատարակուեցաւ Ճերիտէի Շարգիյէի մէջ ընդդէմ քանի մը կէտերու Մեկնութիւնք վաճառականական օրինաց յօդուածին, գոր միեւնոյն թերթին մէջ կը հրատարակէ մեծ. Միմոն Էֆենտի Թընկրեան:

Մեծ. Միմոն Էֆենտի Թընկրեան փոխանակ յստակ եւ ամէն մահկանացուաց հպելի լեզուով պատասխանելու իւր քննադատ մեծ. Աւետիս Էֆ. Սուրենեան, վկայեալ փաստաբան Գաղղիոյ իրաւագիտութեան համալսարանի, Պահճէ քաբու, Շէյխ Իսլամ խան, երկրորդ յարկ, թիւ 6-ին, բաւական շնչարգելութիւն պատճառող եւ առատ քրտինք բերող ոճով մը խնդիրը կը շփոթէ. յետոյ քիչ մը Պոսիւէն կը կողոպտէ եւ լատիներէնը կորսնցնելով սաբիենս թիսմորում քոնսիլիա Ֆաթուա Էրունդ մը կ'արձակէ. պէտք չէ, որ միլիթենուս այլ

լապտոննուս կ'ըսէ առանց ինվիթա Մինեովայի : Յետոյ բերնուց կը գրուցէ « Քոն լա դեդ տը Մետիւզ, մատամ սը մեռո, մատամ է մոռդ, ժը նը մը սան բունն պլեսէ » :

Voilà justemant ce qui fait que votre fille est muette.

Եթէ մեծ. Միմոն Էֆ. Թընկրեան այս ոճով եւ վեցլեզուեան բարբառով պիտի խօսի մեծ. Աւետիս Էֆենտի Սուրենեան՝ վկայեալ փաստաբան Գաղղիոյ իրաւագիտութեան համալսարանի, Պահճէ Քաբու, Շէյխ Իսլամ խան, երրորդ յարկ, թիւ 6-ի հետ, դժուար չէ գուշակել այժմէն, թէ յաղթանակը տանելու յոյս չտար: Իսկ եթէ ինքն եւս համոզուած է, թէ խօսքն արծաթ է, իսկ լռութիւնն ոսկի, որպէս յիշած էինք յունարէն, բոլորով սրտի կը բարենաղթենք, որ քիչ մ'աւելի ոսկի ունենայ:

Վերջացնելով մեր խօսքն՝ մայրաքաղաքիս առողջապահական ժողովոյն ուշադրութիւնը կը հրաւիրենք մեծ. Միմոն Էֆենտի Թընկրեանի յիշեալ յօդուածին վրայ:

Ազգ. լրագիրներէն մին ծանուցանելով Ալիք Էֆենտիէն վերջին օրերս հրատարակուած տնտեսական ու ելմտական շաբաթաթերթը հետեւեալ բարենաղթութեամբ կ'ողջունէ գայն:

«Յարատեւութիւնք ու յաջողութիւնք կը մաղթենք այս օգտակար ձեռնարկին » :

Բարենաղթութիւնն աւելի ազդու, աւելի զօրաւոր, աւելի յոգնակի կ'ըլլար եթէ գրուէր սա պէս.

«Յարատեւութիւնք եւ յաջողութիւնք կըք բարենաղթենք այսք օգտակարք ձեռնարկինք»:

Բարի լոյս, ո' շաբաթաթերթ ելմտական:

Պարտաճանաչութիւն կամ ճանաչումն պարտուց :

Այս տիտղոսով տետրակ մը հրատարակուած է այս օրերս:

Ջուր կամ ջուր

Արդեօք տետրակին պարունակութեանը մէջ ալ ասանկ կամեր կա՞ն. եթէ կան, կ'աղաչեմ ինձի դրկեցէք զանոնք, որ տեսնամ անգամ մը:

Հակառակ մեր կամաց հարկադրուած ենք դարձեալ աւանակը հոլովել... քայց ոչ Հ...ի վրայ, այլ Լեզուի մէկ յօդուածին վրայ:

Այս բանասիրական հանդէսն, որպէս կ'երեւի, մեծ կարեւորութիւն կու տայ այս կենդանւոյն ստուգաբանութեան:

Անոր արժանապատիւ խմբագիրն, այսինքն Լեզուի եւ ոչ թէ աւանակին քանի մը տարիներ առաջ Մասիսի մէջ հրատարակած էր յօդուած մ'որոյ խորագիրն էր Աւանակը հա՞յ է :

Այն ատեն բերանացի հասկցուցին իրեն թէ այսինքն խմբագրին եւ ոչ թէ աւանակին հայն աւանակ չէ եւ միանգամայն խրատեցին նորին արժանապատուութիւնն, որ հայոց արժանապատուութիւնն վիրաւորելու հանգամանք ունեցող բացատրութիւններէ կամ բառախաղերէ զգուշանայ: Եւ խնդիրը գոցուեցաւ: Բայց մեծ եղաւ մեր զարմանքն, երբ Լեզուի վերջին թերթին մէջ կարդացինք անասուններու վրայ լեզուաբանական յօդուած մ'որոյ մէջ ըսուած էր Հայ էջը :

Այս կատակը, ո՛ր Լեզու, ծանր է, եւ չէ այն կատակներէն, զոր երբեմն կ'ընէ Ծիծաղն ընթերցողք գիտեն արդէն, թէ Ծիծաղը թերթիս խմբագրին շունն է ձեր կատակը մարդ կը վախցնէ եւ եթէ Լաֆոնթէն ողջ ըլլար՝ փայտի բազում հարուածներ կը շալկէինք:

Արդ, կը խնդրենք, ո՛ր Լեզու, ջանացէք, որ ձեր լեզուն այնպէս համեմատին ձեր ականջներուն, որպէս ձեր ականջները կը համեմատին...

Գտիր նային անձանօթը...

Համեմատութիւնն աղէկ բան է. Երից կանոնը պէտք է նոյնիսկ լեզուաբանական ախտոյն մէջ:

Ազգային լրագիր ն երն ապշելով ու զարմանալով հրատարակեցին ծնունդն տ դու մոր մէկ մարդու գլուխ եւ մէկ հատ ալ ձկան գլուխ ունի եղեր:

Ի՞նչ կայ զարմանալու, մայրն յղիութեան ժամանակ ձուկերու շատ նայած կ'ըլլայ եւ տղան ալ ձկան գլուխով կը ծնի:

Միթէ հոս չկա՞ն իշու գլուխով մարդեր, կամ մարդու գլուխով աւանակներ:

Ասոր համար քուէարկութիւն պէտք չէ կարծեմ:

Ի՞նչ պիտի ընենք Հիպպոկրատայ աշակերտաց հետ:

Ասոնք սկսան շատ արագ վազել եւ մանաւանդ ոստոստելով ընթանալ սկզբունք փոխելու մէջ:

Բժիշկները մինչեւ հիմա կ'ըսէին մեզ, թէ մարդս պատկած ժամանակը գլխուն տակը բարձ մը դնելու է, զի մի՛ արիւնն գլուխը վազէ:

Բժիշկ մ'ելեր այժմ կ'ըսէ, թէ ոտքերն գլուխէն աւելի բարձր ըլլալու են, որպէսզի արիւնն վար չվազէ:

(Այս անիծեալ արեան հետ փորձանքի հանդիպած ենք արդէն ամէնքս ալ, նոյնիսկ արիւնն ալ այսօր չգիտ ե ր, թէ ուր վազէ... բժշկաց ձեռքէն):

Եւ շատերն սկսած են արդէն բարձի վրայ դնել իրենց ոտքերը: Ուստի շատ կոիւներ եւ վեճեր սկսած են յ առաջ գալ: Տարակոյս չկայ, թէ այս մասին երկու հակակարծիք անձերուն միոյն ոտքերը միւսին գլխուն կողմը պիտի գտնուին եւ փոխադարձաբար: Ոմանք ալ սին վեճերու տեղի չտալու համար ստիպուած են ոտքի բարձն գլխուն բարձէն աւելի բարձր շինել: Շատերն ալ իրենց ոտքերը չուանով պատէն կը կախեն եւ այնպէս կը պատկին:

Բայց մի՛ կարծէք, թէ այս դրութիւնն երկար տեւէ, գալ շաբթու ուրիշ բժիշկ մը կ' ելնէ ու կը պոռա յ.

Վերցուցէք բարձը ձեր գլխուն տակէն, նետեցէ՛ք նաեւ ձեր ոտքի բարձը, այդ դրութիւնն վնասակար է առողջութեան, բարձր բարձ մ'առէք միայն եւ ձեր մէջքին տակը դրէք, որպէսզի արիւնն անարգել կատարէ իւր շրջանն:

Եւ այն ատեն ճիշտ կշիռի դիրք կ'ունենանք: Բայց դիտելի է, թէ մեր քնացած ժամանակը կրնա՞նք մեր հաւասարակշռութիւնը պահել: Խնդիրը կը փոխուի երբ արթուն ենք: Կանայք կը դնեն արդէն այդ բարձն երբ փողոց ելնեն: Ո՞վ գիտէ, թերեւս առողջապահական տեսակէտով է, որ դուռնիւտ կը գործածեն:

Այս խնդրոյն մէջ մտնելն վեր է մեր ոտնահասութենէ, հետեւապէս կուրօրէն հնազանդելով, պարտաւոր ենք քիչ մը ժամանակ մեր ոտքերուն տակն ալ բարձ մը դնել, տեսնենք ի՞նչ պիտի ընէ սա արիւնը:

Չենք ուզեր անցնիլ սակայն առանց յանձնարարելու Երուսաղէմու վանուց միաբանութեան, որ չմոռնայ բարձ մը դնել ի՛ւր ելմտացոյցին պարտուց տակը, որպէսզի արիւնը հոն չվազէ եւ չտկարացնէ պահանջքի կողմը: Մէկ երկու ամիսն ան գ ամ մը հաշուեցոյց հանելով, անոր մէջքին տակն ալ դնելու է բարձ մը, տեսնելու համար, թէ հաւասարակշի՛րն է, թէ ոչ:

Նշմարած է՞ք արդեօք, որ անասնոց ալ բարոյականութեան մեծ անկում կայ:

Ոսկեղէն դարու գազանները պատուաւոր էին, ուրիշին իրաւունքը չէին ուտեր. արդի կենդանիները գող, աւագակ են:

Կատուներու վրայ մասնատրելով խօսքս՝ կրնամ ըսել, թէ ասոնք բնաւ արժանապատուութիւն չունին:

Արժանապատուութիւնն ալ խօսք է, բնաւ խիստ չունին եւ այլոց իրաւունքն կ'ուտեն այն համարձակութեամբ՝ որով պիտի վայլէին իրենցը: Գող են, յափշտակիչ են, բայց վարպետ են: Ի՛նչպէս որակեմ չգիտեմ, կարծես տեսակ մը պանքայի տնօրէններ են:

Գիշեր չանցնիր, ուր սեղանի վրայ քանի մը պատառ միս թոյլ չտան կատուներու յափշտակել: Հեգութեամբ եւ քաղաքավարութեամբ կը մօտենան եւ սեղանէն միս կը յափշտակեն կ'երթան: Իմ սեղանս Երուսաղէմի վա՞նք կը կարծեն արդեօք այս անպիտանները:

Ուսումնասիրելու համար, թէ ջերմութիւնն, լոյսն ու խոնաութիւնն ինչ ազդեցութիւն ունին լրագրաց ուղղութեան վրայ, պէտք է քննել ուղղութիւնն քանի մը լրագրաց, որ լուսաւոր կամ խոնաւ կամ ջերմ տեղեր կը խմբագրուին:

Լուսաւոր սենեակներու մէջ խմբագրուած յօդուած մը յստակութեամբ կը փայլի:

Տաք սենեակներու մէջ խմբագրուածն թոյլ կը լինի:

Խոնաւ սենեակներու մէջ շարադրուածն անհոգի մարմին կը դառնայ:

Շատուց փորձուած է, թէ տեղը մեծ ազդեցութիւն ունի խմբագրի մը կարծիքներուն վրայ:

Ընդհանրապէս հակասութիւն կը գտնուի այն յօդուածին մէջ, որուն կէտը մէկ սենեակի մէջ եւ կէսն ուրիշ սենեակի մէջ շարադրուած է:

Այս իսկ է պատճառ, որ ազգ. Ընդհ. ժողովոյ Ղալաթիոյ մէջ տուած որոշումներն Քումքաբուի մէջ տուած որոշումներուն ծուռ աչօք կը նային շատ անգամ եւ բարեւ չեն տար անոնց:

Ազգ. ժողովները տեղ փոխելու չեն:

Հապա եղանակները...

Ամեն գրագետ կրնայ իր անձին վրայ փորձել բաղդատելով իր ամառուան եղանակին արտադրություններն գարնան եղանակին արտադրությանց հետ:

Սկզբանց մէջ ամենէն աւելի յամառ կարծուածն տարին չորս անգամ սկզբունք կը փոխէ.

Գարնան սկզբունք,

Ամառուան սկզբունք,

Աշնան սկզբունք,

Ձմեռուան սկզբունք:

Եւ որ պիտի գայ, յորում ամեն մարդ առանց քաշուելու պիտի ըսէ.

Այս է իմ ամառուան սկզբունքս. այս է ամառուան բանթալոնս ըսելու պէս:

Եւ այն օրն հեռու չէ:

Մրցանակ, թէ նուէր:

Ոմանք մրցանակ կ'ըսեն:

Ոմանք նուէր կ'ըսեն:

Ես ոչ մին կ'ըսեմ եւ ոչ միւսն, այլ պարզապէս ողորմութիւն կ'ըսեմ եւ իմ խնդակցութիւնս կը յայտնեմ Միրախորեան եւ Ալլահվերտեան էֆենտիներուն, որ յաջողած են Իզմիրեանցի կտակին գութը շարժ եւ իրենց անձին վրայ:

Կարեկցութեան արժանացած են իրենց գործերն, եթէ պէտք է հաւատալ քննիչներու վկայութեանց, որք ոչ թէ մրցանակի, այլ քաջալերութեան արժանի կը դատեն այդ երկասիրութիւններն:

Քանի մը բացատրութիւններ կան, որք տկարութիւն կը նշանակեն եւ այս բացատրութիւններն են.

Քաջալերութեան արժանի է.

Տակաւին պզտիկ է.

Առաջին գործն է.

Փորձառու չէ տակաւին.

Ապագային համար յոյս կու տայ.

Այս բացատրութեանց ամէնէն զօրաւորն առաջինն է, որովհետեւ տկարներն են արժանի քաջալերութեան: Եւ տակաւին կ'ըսեն, թէ կտակն անբռնաբարելի է:

Տկարներն քաջալերելն քաջերն վհատեցնել չէ՞:

Երկու առագաստաւոր կը մրցին:

Մին ետ կը մնայ եւ կ'երթայ մրցանակը կ' առնէ:

Ինչո՞ւ:

Ետ մնացած ըլլալուն համար:

Ե՞տ մնացողներու խոստացուած է մրցանակ:

Ո՛չ:

Ինչո՞ւ ուրեմն կ' առնէ:

Որպէսզի քաջալերուի եւ ապագային մէջ աւելի արագ ընթանայ:

Տեսակ մը բարեգործութիւն է այս, եւ ուրախ ենք, թէ այդ երկասիրութեան ց հեղինակներն մասամբ դարմանեցին վնասն, որ այդ գործոց տպագրութեան ծախքէն յառաջ եկած էր. այսուամենայնիւ ազգային արժանապատուութեան տեսակէտով կը տրտմինք, տեսնելով՝ որ այդ կտակի մնայուն յանձնաժողովոյ առաջին գործողութիւնն արժանի չէ մրցանակի:

Տար Աստուած, որ օտար լրագիրներն հետաքրքրութիւն չունենային մրցանակի արժանացած այդ գործերն թարգմանել տալու, թէեւ վստահ ենք, թէ ոչ մէկ հայ մ'որ ազգային արժանապատուութեան նախանձախնդիր է՝ պիտի յօժարի թարգմանութեան սոյն տխուր պաշտօնն ընդունելու:

Խիկար եւս պատիւ ունի բանալ մրցանակի ասպարէզ մը, եւ հրաւիրել հետեւեալներն, որ մրցին իրարու հետ:

Խմբագիրներն՝ ստախօսութեան ճիղին մէջ.

Երեսփոխաններն՝ իրարու խօսք չհասկնալու մէջ.

Չոզեքարձութիւններն՝ դասատուաց ամսականները չվճարելու ճիղին մէջ.

Գրագէտներն՝ անօթութեան դիմանալու կարողութեան մէջ.

Լեզուաբաններն՝ հայերէն բառերն իրենց ուզածին պէս մեկնելու մէջ.

Կիներն՝ նորաձեւութիւն ստեղծելու մասնագիտութեան մէջ.

Էրիկներն՝ կանանց պճնասիրութեան ծախսօց համբերելու մէջ.

Երկաթուղոյ պաշտօնեաներն՝ ճամբորդներու հետ նուազ քաղաքավարութեամբ վարուելու մէջ.

Տպարանապետներն՝ զիրար կործանելու չափ աժան դասագրքեր հրատարակելու մէջ.

Հարուստներն՝ հիւանդանոցի շինութեան համար իրենց քսակին բերանը գոցելու մէջ.

Պատուելի միսիոնարներն՝ ի դիմաց Տիրոջ՝ գաւառաց մէջ քրիստոնէա ն երն ի քրիստոնէութեան դարձնելու մէջ.

Փաստաբաններն՝ ճշմարտութիւնը հալածելու մէջ.

Բժիշկներն՝ հիւանդներ մեռցնելու մէջ.

Բեռնակիրներն՝ անցորդներու գլուխը պատռելու մէջ.

Թրամուլէյի քոնսիլթթեօրներն՝ անցորդները գծ է ն հեռացնելու համար ուժով հրելու եւ անոնց քիթը բերանը արհիւնտտելու մէջ.

Սրճարանապետներն՝ գարիով խահուէ եփելու մէջ, եւ այլն եւ այլն եւ այլն:

Մրցանակաց բաշխումը հանդիսատր կերպով տեղի պիտի ունենայ 1888 օգոստոսի վերջը:

Մարդ յանձնարարելու նոր եղանակ:

Կ'աղաչեմ, կրնա՞ք ըսել ինձ, թէ ի՞նչ տեսակ մարդ է սա ձեր դրացին:

Աղէկ մարդ է... բայց ինձի մի՛ հարցներ:

Խօսքին կը հաւատացուի՞:

Կը հաւատացուի... բայց մի՛ ստիպեր զիս, որ խօսիմ անոր վրայ:

Վստահելի՞ մարդ է:

Վստահելի է... պատասխանատութիւն չեմ առնէր վրաս:

Ինչո՞ւ:

Խօսիլ մի՛ տար գիս:

Խաբեքա՞յ է:

Ես մարդ արելու բնութիւն չունիմ... ինչուս պէտք իմին... բարի մարդ է, վէսելամ
:

Հետք գործ կրնա՞մ ընել:

Ձեր գիտնալու բանն է... այն մարդը իմ բարեկամն է... թող որ բարեկամն չըլլար
ալ նէ՛ ես սովորութիւն չունիմ մարդու ետեւէն խօսելու: Անոր ըրածներն բոլոր
աշխարհ գիտէ արդէն, քանի-քանի հոգիներու հետ ընկեր եղաւ ու վնաս տուաւ...
բայց ինչո՞ւս պէտք իմին:

Ըսել է, որ զգուշանամ:

Քուկին գործդ դուն գիտես, աղբար, այդ մարդուն ստակ տուի՞ր մի, գնաց, ալ չես
կրնար ետ առնել... Բայց իզմէ իմացած մի՛ ըլլար... Չեմ ուզեր ես մարդ արել...
բարի մարդ է, բարի:

Ընկեր ըլլա՞մ հետք:

Դուն գիտես... պաթմիշ ըլլալ կ'ուզես նէ՛ եղիր... կը ցաւ իմ, որ գիս խօսելու կը
ստիպես կոր... Աղէկ մարդ է, աղբար, աղէկ... ես կը սիրեմ ան մարդը...

Շնորհակալ եմ ձեր տեղեկութիւններէն:

Պապա մարդ է, պապա, անանկ անուշ կերպով կը խաբէ, որ կը զարմանաս...
այսուամենայնիւ ինչո՞ւս պէտք իմին... չեմ ախորժիր մարդ բամբասելէ, գէշ բան
է, անանկ չէ՞ մի...

Անանկ է, շնորհակալ եմ: